ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/16» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 15.06.2026թ.
Ժամը 16[30]

Հանձնաժողովի նախագահ՝ (գնահատման աշխատակազմի պատասխանատու)՝ (ԳԱՊ)
ՀՀ ՊՆ սպառազինության և տեխնիկական ապահովման վարչության ավտոմոբիլային ծառայության շահագործման և վերականգնման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Արմեն Կամոյի Յախշյան (ԳԱՊ),
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ սպառազինության և տեխնիկական ապահովման վարչության ավտոմոբիլային ծառայության շահագործման և վերականգնման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Արզուն Մերուժանի Հովհաննիսյան,
ՀՀ ՊՆ սպառազինության և տեխնիկական ապահովման վարչության ավտոմոբիլային ծառայության շահագործման և վերականգնման բաժնի ավագ սպա, մայոր Երեմ Ռուդիկի Մարգարյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ Ա. Սիմոնյան:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/16» ծածկագրով գնանշման հարցում (ԳՀ) ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Սիմոնյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/16» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/16» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Սիմոնյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/16» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«ՍՎԱ-Մոթորս» ՍՊԸ
2	«ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/16» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ

յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են բացառությամբ՝ «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ-ի:

«ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում են ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությունը՝ հավելված N 1-ը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հավելված N 1.1-ը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 15.06.2026թ. որոշեց կասեցնել նիստը և առաջարկել մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

17.06.2026թ. շարունակելով հայտերի բացման և գնահատման նիստը գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող շտկումները որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/16» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ա. Սիմոնյան)

3.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/16» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

ՀՀ	Ապրանքի անվանումը	Չ/Մ	Քանակը	Գնման գին	Մրցույթին մասնակցող կազմակերպությունների			
					անվանումները	գնային առաջարկները		
						առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր գինը
1	Գործիքների հավաքածուներ (Անվաշղթա ռազմական նշանակության մեքենաների համար)	հատ	600	18 360 000	«ՍՎԱ-Մոթորս» ՍՊԸ	15 000 000	3 000 000	18 000 000
					«ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ	19 870 000	3 974 000	23 844 000

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/16» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.

(Ա. Սիմոնյան)

4.1 17.06.2026թ.՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/16» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝

1-ին չափաբաժնի մասով ընթացակարգում ընտրված մասնակից ճանաչվեց «ՍՎԱ-Մոթորս» ՍՊԸ-ն,

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4.2 Հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին պայմանագրեր կնքելու առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/16» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն: Սույն ընթացակարգի մասով սահմանվում է տասնօրյա անգործության ժամկետ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

(Ա. Սիմոնյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/16» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Նախագահ (ԳԱՊ)	Ա. Յախշյան
Գնահատող	Ա. Հովհաննիսյան
Գնահատող	Ե. Մարգարյան
Գնումները համակարգող՝	Ա. Սիմոնյան